ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 28.09.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 357-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի դրույթներով,

հիմք ընդունելով Պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի» 12-րդ և 35-րդ կետերի պահանջները,

հաշվի առնելով Պալատի նախագահի 28.09.2018թ. թիվ 357-Լ որոշմամբ հաստատված՝ «Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին» կարգում, մասնավորապես անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ դիմումների և որոշումների հաշվառման կարգավորումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Կարգի 24-րդ կետը փոփոխել՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. ***«ՀՊԳ ղեկավարի հանրային պաշտպան նշանակելու որոշումը համարակալվում է հետևյալ կերպ. նշվում է «ՀՊԳ» հապավումը, այնուհետև սույն Կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումը կայացվելու դեպքում՝ կատարվում է «Վ» նշագրումը, նույն կետում նշված մյուս բոլոր որոշումների դեպքում՝ «Ք» նշագրումը, հերթական համարը, որոշումը կայացվելու տարեթվի վերջին երկու նիշը, և վերջում նշվում է «Ա» տառը: Կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումների համարակալումը կատարվում է առանձին: Որոշումների համարակալումը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:»***:

08 հունվարի 2019թ.
թիվ 3-Լ

2. Կարգի 25-րդ կետը փոփոխել՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. ***«Դադարեցման և մերժման որոշումների համարակալումը կատարվում է հետևյալ կերպ. նշվում է «ՀՊԳ» հապավումը, այնուհետև մերժման որոշումների դեպքում կատարվում է «Մ», իսկ դադարեցման որոշումների դեպքում՝ «Դ» նշագրումը, նշվում է որոշման հերթական համարը, որոշումը կայացվելու տարեթվի վերջին երկու նիշը և վերջում նշվում «Ա» տառը: Դադարեցման և մերժման որոշումների համարակալումը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:»***:

3. Կարգի 26-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.***«Հաշվառումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով: Այդ դեպքում առկա փվյալները որոշակի պարբերականությամբ արտահանվում և պահվում են համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում:»***:

4. Կարգի 27-րդ կետը «տրամադրման դիմումների» բառերից հետո փակագծից դուրս լրացնել ***«և դրանց առնչությամբ ՀՊԳ ղեկավարի կողմից կայացված որոշումներն»*** արտահայտությամբ:

5. Կարգի 28-րդ կետը «դիմումները» բառից հետո լրացնել ***«, ինչպես նաև դրանց առնչությամբ ՀՊԳ ղեկավարի կողմից կայացված որոշումներն»*** արտահայտությամբ:

6. Կարգի 29-րդ կետը փոփոխել՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. ***«ՀՊԳ ղեկավարի մերժման և դադարեցման որոշումներն առանձնացված էլեկտրոնային եղանակով հաշվառվում են սույն կարգի թիվ 6 հավելվածով սահմանված թիվ 4 գրանցամատյաններում:»***:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումների համարակալումը սկսել 1-ից, Կարգի 5-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված որոշումների համարակալումը շարունակել:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մերժման որոշումների համարակալումը շարունակել, իսկ դադարեցման որոշումների համարակալումը սկսել 1-ից:

9. Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում սույն 2019 թվականի հունվարի 8-ից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

08 հունվարի 2019թ.
թիվ 3-Լ
ք. Երևան